




887

L IV. 5







ԱՅՀՈՒ ՀԵՎԱՍՏԱՆ

Հ Ա Յ Ի Ա

ԲԵՐԹՈՅԵԿԱՆ, ԲՆԵԿԱՆ, ԲՇՇԱՄԻՐԵԿԱՆ ԵՒ ՍԹԵՒՏՐԵԿԱՆ
ԳԻՏԵԼԵԸՑ

ՀՐՁԱՆ ԳԵ ՑԱՄՍ ԵԱՅ

Հ Ա Բ Ե Գ Ի Բ Ք

Գ. Պ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ Տ. ԳԱՐԱԳԱՅԵԱՆ

Ա. ՏԱՐԻ. Ա. ՀՐՁԱՆ

1862

Թ Ի Ւ 5 · Ա Պ Ր Ի Լ 5

Հրատարակի ամփաց երկու սնդում .

Վեցտարեայ գինն է 8 ֆրանգ .

Խցմիքն դուրս ճամբռ ծախքը տանոցին ջրայ է .

Վտորագրութիւնները շրջանին սկիցքն կըսկպին .

Հ անդեսին մերաբերեաց որ եւ իցէ նումակ եւ գրութիւն տնօրէնին դիմի ուղցուի .

Վտորագրութեան տեցերն են .

Իշմիք՝ ծացիկի գրառանեակց , կիրիթ խոն , թիւ 3 .

Կ. Պօշիս , մեծարգոյ Խ. Թ. Գաշենաւելեանին սենեակց ;
Պաշը Պաշար Կամուրջն գչութք' . Եւ Ընթերցասիրաց ընկերութեան սնթերցարանը , լրեծ նոր խոն , թիւ 6 :

Հաշել , մեծարգոյ Յ. Ս. Քիւրքեանօֆ :

Փարիզ , M. A. Mourad, Rue du Dragon, 26.

Մանչեսթեր , D. Eksler, George Street, 78.

Բ Ա Բ Ա Յ Ա Կ Ա Ն

Կ Փ Կ

Հատ անդամ պատեհութիւն ունեցաց դիմելու
իգական սերին այն արութիւնը՝ որով բազդի սաս-
տիկ և Ճնշող հարուածներուն գէմ կը դնեն :
Այնպիսի վշտեր և վշուառութիւններ որոնք այր
մարդը յուսահատեցնելով՝ մինչեւ անդամ գերեղ-
ման կ'իջեցնեն զանի , կարծես թէ քնքուշ սերին
բովանդակ զօրութիւնը յառաջ կը գրգեն , և այն
կերպ արութիւն և մեծանձնութիւն կը շնորհեն ա-
նոր բնութեանը՝ որ երբեմն դերբնականի կը մեր-
ձենայ . Զկայ արդարե աւելի սրտառուչ տեսարան
մի՝ քան տեսնել փափուկ և քնքուշ կին մի՝ որ իր

կենաց ժամբուն երջանիկ շաւղին մէ չ անզօր և
ուրիշի պաշտպանութեանը կարօտ էակ մի է , և
նաև թեթև գժբաղդութեան մի կարի զդայուն ,
յանկարծ մտաւորական զօրութեամբ մի կ'արիա-
նայ , երկանը աղեսից միմիթար ու պաշտպան կը
կանգնի և անընկճելի արութեամբ մի թըշուառու-
թեանց դառնաղէտ հարուածներուն կը գիմագրաւէ :

Ինչպէս որթը՝ իր դաշլրի տերեւները երկար
ատեն կաղնիին պատասած՝ արեւուն լցոյր առաւե-
լաբար կը վայելէ , յանկարծ երբ իր աս ապահ-
նած տունիը կայծակէն արմատաքի խլուելլվ յեր-
կիր կործանի , այն վերստին իր նորածղի և
փայփայիչ տերեւները ախոր բոլորամիքը կը յենու
և ջախջախուած ոստերը կը պատէ , սոյնպէս ալ
գեղեցկապէս սահմանուած է ՚յախախնամութենէ ,
որ կին արարած մի՝ մինչդեռ իր էրկանը երջանիկ

կը շտկէ , տրամաբանել կը սովորի և
իւր բարքն ու բնաւորութիւնը ուղիղ
ճամբռու մէջ կը դնէ :

ՎԵհծի գովեստից և երախտագիւ-
տութեան արժանի են արդարեւ բոլոր
հայրենասէր խմբագիրք , որոնք աղ-
դատիրական ոգւով կը ջանան միշտ
զԱզդը արթնցընելով՝ զայն լուսաւո-
րութեան և բարեկրթութեան ցանկա-
լի պողոսայն առաջնորդելու :

ՄԵնք ալ , ըստ մը կարծու-
թեան , այս անձնանուէր անձնանց
աղդասիրական ոգւոյն մասնակից ըլլալ
փափաքելով , սոյն այս ԳԱՐՈՒՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ անուն կիսամնեայ
հանդէսը կը նուիրեմք խոնարհաբար
մեր սիրելի Ազգին ընթերցասիրացը «
Խնչպէս որ յայտնած ենք ար-
դէն մեր Յայտարարութեան մէջ , այս
հանդէսը Բարսյական , Բնական ,
Բանասիրական և Առևտրական գիտե-
լիքներ պիտի ուղարունակէ , պիտի ջա-
նայ միշտ պմենուն հաճելի և օգտա-
կար ըլլալ և ամեն մտքերու հպելի
ընել իւր մէջը բովանդակուած նիւ-
թերը :

Բարյական Յասը . որ մարդուս
հողին կրթելու և բնաւորութիւնը
աղնուացընելու կը նըստէ , պիտի
բովանդակէ այլ և այլ խորհրդագու-
թիւններ , դաստիարակութեան , բա-
րոյականութեան , քաղաքակրթութեան
և քաղաքավարութեան վրայ զրու-
թիւններ , օդատար խրատներ , խե-
լացի ասացուածներ , բարոյական ա-
ռակներ , առածներ և այլն :

Բնականը , որ ամեն տեսակ մար-
դութէ զուարժակի և թէ նըստատա-

ւոր է , պիտի խօսի բնական պատմու-
թեան և բնագիտութեան վրայ , ո-
րոնց մէջ կը բովանդակին կենդանեաց
և բուսոց բնութիւնը , երկրիս կաղ-
մութիւնն ու իւր մէջը դտնուած նիւ-
թերը , բնաբանական , բնալուժական
և աստղաբաշխական դիտելիքներ :

Բնականութիւնն տակ պիտի գտնը-
ուին աղկային նախնի և արդի սովո-
րութիւններ , հետաքրքրական , պատ-
մական և աղնարհագիրական տեղեկու-
թիւններ , այլ և այլ տեղերու ստու-
րագրութիւններ , երեելի համբոր-
գութիւններ , աղգերու և ցեղերու
սովորութիւններ ու բարքեր , բանաս-
տեղծութիւններ , զանսղան վիպասա-
նութիւններ , ընաիր թատրերգու-
թիւններ , և երբեմն մասնաւոր երեե-
լի անձնաց պատմութիւններ :

Եռեւորիան ճասը պիտի պարունա-
կէ զանսղան գրամմերու զիններ , փո-
խանակադրերու արժողութիւններ ,
Խմբիր թէ ծովէ և թէ ցամաքէ մը-
տած աղրանաց որքանութիւնը , եկած
նաւերը , շոգենաւերը , ուրիէ գալեր-
նին , բերած աղրանքնին , մեկնող
նաւերը , ուր երթացնին և տարած

ապրանքները « Աւրոպիոյ մեծ ու վա-
ճառաշահ քաղաքներէ . Օմիւնիա դա-
շեք վաճառականական նաւերը իրենց
անունով և պարունակութեամբը . նը-
մանապէս Տաճկառտանէն Անդդիա գա-
ցած գլխաւոր ապրանքներուն այնտեղ
ծախուած դինները և արժողութիւնը :

Այս տեղեկութիւններէ վերջու
կը փութեանք սա ևս իմացընելու Ար-
դոյ հասարակութեան , թէ ԳԱ-
ՐՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ Բնական շահ

ընելու, գիտառութիւն չունի, ինչ
պէս նաև վնաս ալ կրել չ' փափաքիր ·
իր շարժառիթն է Աղդամիրութեան
ոգին, և այս պիտի ըլլայ մինչև իւր
վերջի շունջը :

Աղաչելով իւր Արդս ընթեր-
ցողները՝ որ իրեն արդառորութեան և
ծաղկաւէտ ըլլալուն օժանդակին,

Մնայ միշտ

անձնանուէր Աղդին.

ԳԵՐՈՒՆ ՀԱՅԵԱՏԵՎԻ :

ԶԻԴ-ՆԻ- 1 ՔԵՐԵՇ 1862

Բ Ա Բ Ա Յ Ա Կ Ա Խ



Արթուրեան եւ գիտութեան թեւերն են
ցերեցախիրութիւննեւ ուսումնահրութիւն.

Կրթութեամբ և դիտութեամբ
մարդիկ իրենց գաղանային քնութիւնը
և չար ու վատ կրքերը մէկդի ձգելով՝
քաղցր ու բարի բնաւորութիւնն մը կը-
զգենուն · Խակ կրթութիւնն ու դիտու-
թիւնը ընթերցախիրութեան և ուսու-
մասիրութեան ձեռօք կը տարածուին
մարդութեան մէջ ·

Խնչպէս կարելի է մտրու մը
բարեկրթ ըլլալ, գիտուն երեկի, ե-
թէ ընթերցախիրութիւն չունենայ, ե-
թէ ուսման ձաշակը դոնէ քիչ մը ա-
ռած չըլլայ, և եթէ յաճախ կրթական
և ուսումնական գրուածներ չընթեռու:

Աղդի մը ընթերցախիրութեանէն
կը ծագի իւր յառաջադիմութիւնը, կը բ-
թութիւնը և լուսառութիւնը :

Ուսմամբ և կրթութեամբ օգտա-

կար տեղիկութիւններ կունենայ մարդ.
անոնցմով երկնացին մարմններին մեր
հողադունտին հետ ունեցած յարաբե-
րութիւնները կը սովորինք, կը գիտ-
նանք նաև թէ ինչ են և ուսկից կը
պատճառին հօլը, անձրելը, ձինը,
կարկուաը, տեռակ տհսակ բնական ե-
րելյթները, ինչ է արեդական և լուս-
նոյ խաւարմանց պատճառը, ինչպէս և
մրշափ միջոցի մէջ կը կատարուին ի-
րենց ամենօրեայ և միամեայ շրջանները,
ինչ աղդեցութիւն ունին երկրիս վրայ,
ինչու երբեմն երկար և երբեմն կարձ
օրեր կունենանք, եղանակաց փոփո-
խութեան պատճառը ուսկից է, և ին-
չու օդը երբեմն տաք և երբեմն ցուրտ
կը լայ :

Կամանապէս ընթերցանութեամբ
այլ և այլ հարկաւոր դիտութեանց
վրայ ծանօթութիւններ կունենանք ·
Աշխարհագրական դիտութեան միջնոր-
դութեամբ հեռաւոր քաղաքաց կլիման,
դիրքը, մեծութիւնը, ունեցած բեր-
քերը, բնակչաց թիւն ու անոնց ինչ
բարքի տէր ըլլալը, և այլն կը սովո-
րինք : Ինդհանուր աղդաց պատմու-
թեամբ՝ անցած գացած մարդերու վրայ
տեղեկութիւն և անոնց վարուց և կե-
նաց ընթացքին պատմութիւնը կարդա-
լով խելք և փորձառութիւն կունենանք
որոնցմէ զուրկ կը լայ տգետ մէկը :

Ուսմամբ և ընթերցանութեամբ
աղդու և գեղեցիկ ձեւ մը կառնու մեր
խօսակցութիւնը, անոնցմով ընկերու-
թեան մէջ վայելուչ մարդավարու-
թեամբ վարուիլ կուսանինք, տիրոջը
վայլած պատիւը ծառային ընելով և
ուրիշ անքաղաքավարութիւններ գոր-

ծելովկոպիտ անուան չենք արժանանարդ
ընթերցմամբ, և ուսմամբ՝ չե՞մ մի
որ մասց լուսաւորութիւն; գատողու-
թեանց և գաղափարաց ճշգութիւն կու-
նենանք, ծիծաղելի աւելորդապաշտու-
թեանց, նախապաշարումներու, և ան-
չիմ գուշակութեանց և կախարդու-
թեանց գերի չենք ըլլար:

Դարձեալ կրթութեամբ, որ
ընթերցանութենէ կը ծագի, մարդու-
մաքրասէր կը լսայ, և իր արտաքին
տեսքը սիրուն ու հաճելի ընելու կաշ-
խատի, մաքրասիրութիւնը՝ մասց մաք-
րութիւն կուտայ, և ազնիւ խորհուրդ-
ներ և զգացումներ կաղդէ մարդուս:

Ընուսումն կամ ազետմէ կը ուսում-
նական ընկերութեան մէջ ողորմելի լո-
ռութիւն մը պահել պէտք է, եթէ
չուղեր որ իւր վրայ իննդան ունենդիրք
որպէշեաւ աշխարհազրութեան վրայ
խօսք եղած ատեն, Հայաստանը՝ Փրան-
սայի արեմտեան դին կը դնէ, Ընի
քաղաքը՝ Երբուայի մէջ Միջերկրական
ծովուն եղերքը կը տանի, Լոնտոն
Սեաւ ծովուն վրայ շինուած է կըսէ, ՝
Մալթան՝ Ամերիկա կը իրկէ և Պու-
թոն՝ Ամերիկայի միացեալ նահանդաց
մայրաքաղաքը՝ Աֆրիկէ ի մէջ կը փնտուէ:

Մթէ խօսակցութեան թելը հին
պատմութեան վրայ դառնայ, Հայկայ՝
Բէլ բռնաւորին, հետ ըրած պատե-
րադմը՝ Վոլուէսի քարոզութենէ ետքը
կը դնէ, Արամ և Կոստանդիանոս,
Հովերսոս, Պղատոն և Դաւիթ անյաղթ-
իրարու ժամանակաիր կը կարծէ, Վար-
դանեան քաջերուն ըրած պատերազմը՝
Տրովադայի կարծանումէն հինգ վեցը
տարի յառաջ կը դնէ, և էնկ միմնուր՝

Աղեքսանդր Մակեդոնացիէն յառաջ
էր կըսէ:

Ընթերցասիրութեամբ կարող է
մարդ այս սխալները ուղղել և ծաղ-
րելի ըլլար:

Դժբաղդաբար մեր աղդին մէջ
պէտք եղածին չափ ընթերցասիրութիւն
և ուսումնասիրութիւն չկայ, մանաւնդ
Երբուայէն հեռու գտնուած զաւառ
ներու և բռն Հայաստանի շատ քաղա-
քաց մէջ:

Այն քաղաքաց Հայերը՝ որոնք
քիչ շատ ուսումնասէր են, անոնք մեծ-
և նուիրական պարտաւորութիւն ունին
ուսման և դիտութեան ճաշակը տալ
այն տգետ ագգայնոց՝ որոնք ոչ կրնան
կարգալ, և ոչ ալ իմանալ Հայերէն
լեզուն, իրենց մայրենի բարբառը,
թշուառ վիճակի: Ազգային Սահմանա-
դրութեան շնորհիւ միայն կարելի է
Հայուն այս վիճակին աղատիլ:

Ճշմարիխ Ազգասէրն և ուսում-
նասէրը պարտաւոր են միութեամբ և
մի հոգւով աղդային յառաջադիմու-
թեան համար աշխատիլ, և աշխատով-
ներն ալ քաջալերել բանիւ և զործ-
քով, ազգօգուտ ընկերութիւններու և
պարբերական հանդէսներու միջոցաւ
ընդհանուրը. Ազգին մէջ կրթութեան
և գիտութեան սէր ապրածել և ապա-
գայ սերսնդին լուսաւորութեան պատ-
ճառ ըլլար:

Ազգասէրը՝ ուսումնասէրներու հետ
միշտ ջանքը ձեռքէ սէտաք չեն թողուլ,
երկուքին կողմանէ ալ յոյս, յոյս և
դարձեալ յոյս:

ՅՈՅՈ ԵՒ ԶՈՅՅ

Ասոնք պէտք է որ ըլլան ճշմա-

բիս աղղասիրաց գրօշակին վրայի կը բուածքը . աստնյմով միայն կարելի է . աղղին բարայական և մտաւորական յառաջդիմութեանը փափաքողաց բաղաձանքին կատարուիլը : Հաստատուն յոյսունեցողներու ջանքը անպտուղ չմնար , այն յոյսով ամեն գժուարութեանց և խոչնդոտներու կը յաղթեն , և փոխանակ վարօրէն անհոգութեան և թութեան մէջ խնալու՝ աշխատանքնին կրկնապատկել պէտք են միշտ , որպէս զի իրենց ջանից քաղցր սրուղը վայելեն յետեն յետոյ :

Վաղային անչոգութենէն մեծ վրանասներ յառաջ եկած են և կուգան . ոչ ընթերցանիշութիւն , հետեաբար ոչ կրթութեան նէր և ոչ ալ զիառւթեան փափաք կաւնենայ անհօգութեան անդունդին մէջ թաւալող ազգ մը :

Վմն աղղային անչատ պարտք ունի աղղին յառաջադիմութեանը փոյթունենալ աղղային ընդհանուր օգուած ամեն բանէ վեր բռնել , ամեն օգուածներէ բարձր դասել : Յախնի մէկ քանի աղղեր , ինչպէս Հռովմայեցիք , Ապարդացիք և այլն , պնչափ վառուած էին աղղասիրութեան և հայրենասիրութեան հուրով , որոնք իրենց հայրենաց վնաս , և աղղին անարդութիւն չգալու և օտարաց առջև պղտիկ չիյանալու համար ոչ եղանակը կը նայէին և ոչ զաւակ : Բրուտոս Հռովմայեցիին աղղասիրութիւնը մտքերնիւ բերենք , որն որ Հայրենացը օդտին համար իւր երկու զաւակները սրաննեց (1) .

(1) Հայրենեաց և աղղին օդտին և աղատաթեան համար զաներ ընել պետք ենք , այս , բոյց առանց խոչեմութիւնը ձեռքի ձեռք :

թնդ օրինակ ըլլան Վարդանեան հարենաէ թները արդի Հայոց , անոնք աղղին և հայրենեաց սիրոյն համար մահը աչք տուին :

Կը թութիւնն ու լրանաւորութիւնը (որոնցմէ և հայրենասիրութիւն) ինչպէս ըստնք , ընթերցանիրութիւնէ կը բղին , իսկ ընթերցանիրութիւնը գըրքերու և բարոյական , բնական , բանասիրական գիտելեաց վրայ խօսնդ հրապարակաթերթերու ծաւալմանէն կախում ունի . աշխատինք ուրեմն ասոնց ծաւալմանը համար :

Գ : Գ :

Բ Ա Ժ Ա Մ Ֆ Ե Լ Ո Ւ Ր Ո Զ

Այս սողունը Ռմերիկայի մէջ կը դանուի : Վւելի տաք և խոնաւ երկիրներ և առատ բոյսեր և առնելեր եղաղաքագարձներու տակէ ասոր բնակութիւնը : Եթէ իւր բնական աղղումը իրեն վկասակար և սարսափելի միջոցները դորձածել տար , այն ժամանակ իւր բնակած երկիրներուն այնպիսի պատիմ մը կը լսար , որոյ մէջի բնակիչները կըստիկուէին իրենց տեղերը թողուլ և փախչել , որովհետեւ իւր թոյնը ուրիշ բոլոր օձերու ունեցած թոյներէն սոսկալի և աղղուէ , և կը լիման որչափ տաք ըլլայ , այնչափ այս օձը վտանգաւոր իրլայ : Բայց բարերաղգաբար իւր զօրութիւնը միայն ինքնինքը պաշտպանելու համար կը գործած էր զորագութիւնը միայն ինքնինքը զաւակիր , եթէ զինքը չզրգուեն ,

ընդհակառակը անոր ներկայութենէն կը փախչի, նաև այն ժամանակ՝ երբ վախնալու բան չկայ:

Այս թունաւոր օձերը կը զանազանին միւս տեսակներէն իրենց ծնոտի ոսկրներուն և թունալից կարթերուն (crochets) զարմանալի կազմուածքովը: Երկայն և դիւրաշարդ ոսկրեղէն կոթ մը՝ վերին ծնոտին ոսկորները հաստատուն կը բռնէ, որոնց վրայ կը գտնուի երկայն, սուր, ձանկի նման և խողովակածե ակուայ մը, որն որ աշաց վարի դին եղած խաղջմունքի (Եթովելի) մը վրայ դրուածէ: Այս խաղջմունքին մէջ պահուածէ թունաւոր դեղին հիւթ մը: Երբոր կենդանին կամք չունենայ իր թոյնովը վեասել, սոյն այս ակուան իւր լինդին մէկ ծալքին մէջ կը պահէ: Այս օձերուն գլուխը եռանկիւնի և կողմանի լայն է, որովհետեւ կարթերը շատ տեղ կը բռնեն: Այս տեսակ օձերուն լեզուն շատ երկայն կը լսայ, և կոկորդը շատ կը տարածուի: Թունաւոր կարթերը վերին ծամելեաց վրայ հաստատուած են:

Մատենով կարծիք մը կայ եղեր թէ օձերը՝ իրենց որսը հմայելու և կամ զանի վախով թմբեցցընելու կարողութիւնն ունին: Երևելի մատենագիրներէ շատերը այս կախարդութեան իրաւ ըլլալը կը նդունին, և այս տեսակ օձերուն՝ դէպ 'ի իրենց որսերը արձակած պականեալ շունչէն յառաջ կու զայ կը սեն. բայց ճշմարտապէս հաստատուած չէ՝ այս: Այսչափ ընդհանուր եղած այս կարծիքը՝ նոյն օձերուն պատճառած երկիւղէն յառաջ

եկած կերեկի. որովհետեւ անառունները, ինչպէս նաև մարդիկ, ընդունակ են անմիջապէս երկիւղ մը զգալու՝ երբոր յանկարծ այս սողուններէն տեսնելու ըլլան: Ուրեմն ըսել լմնցընել պէտք է որ միայն երկիւղն է ստոյդ պատճառ այս բոժոժաւոր օձին կարծեցեալ հմայիչ զօրութեան:

Բոժոժաւոր օձ ըսուելուն պատճառն է իր տառնին (պոչ) ծայրը բաւական նշանաւոր զործարան մը ունենալը, այս զործարանը կը բաղկանյայ կոնածե, շարժուն և իրարու կըցուած օղակներէ, որոնք իրենց տարեկան մորթափոխութենէն յառաջ կու զան չոր մագաղաթի նման ձարձատին թաղանթի փոխուելով, որուն շառաչիւնը իրենց մերձ ըլլալը կը յայտնէ: Երբեմն տառնին վրայ քառասուն և մինչեւ անդամ յիսուն օղակ ունեցող օձեր տեսնուած է:

Կըսեն թէ բոժոջաւոր օձերը խորամանկ կը լսան, բայց իրենց ուղեղը շատ փոքր ըլլալուն համար, պէտք չէ զանոնք շատ խելացի կարծել: Իրենց ամենակառարեալ զգայարանքներըն են լսելիքը և մանաւանդ տեղանելիքը: Օձերու բարքն ու բնութիւնը բաւական քաղցը են: Անդամներէ զուրկ ըլլալուն, չեն կրնար շուտով մը մէկ տեղէ ուրիշ տեղ անցնիլ, այսու ամենայնիւ բաւական հեռու կը նետուին: Այս դորոշութիւնը ընելու համար իրենք իրենց վրայ կը թաւալին, կը գալարուին, գլուխնին գետնէն վեր բարձրացուցած, ինքզինքնին բոլոր իրենց դնդերներուն զօրաւոր և փութանակի կարկամութեամբը ձըդ.

տալսրի (ressort) . նման թող տալսր՝ կը նետուին :

Այս սողուները իրենցմէ երեք անգամ մեծ կենդանիները կը լլելու կարողութիւնը ունին , որովհետեւ իրենց որկորը (պղղաղի ծակը) շատ դիւրաւ կը բայցուի ու կընդարձակուի : Հնդկաստանի մեծ օձերը՝ այծեր , եղջերուներ և այլն , անգամ կրնան կը լլել : Բներանի առաստաղին շատ կամ քիչ շարժուն սոկրներէն զատ , ետեւ ծոռւած փոքր ականերով ևս զինեալ են , որոնք որսը բռնելու կը դորժածուին , ինչու որ ծամելու բնաւ չեն գար անոնք :

Հնդկիները առանց վտանգի՝ այս օձերը կը կրթեն , կը նստանեցնեն և կը թմբքցը ընեն կամ այսպէս ըսենք , կը հմայեն : Տեսակ մը նուազաւոր պարի և գաշնակաւոր երդի կը վարժեցընեն զանոնք : Պ. տը Շաթոպրիան Ֆիլրանացի կը պատմէ թէ , 1791 ին , վերին Քանաստայի մէջ , կը նետու գետին եղերացը վրայ գտնուելով՝ տեղացի մը տեսերէ , որ բարակ դաւազանի հարուածով մը բոժոժաւոր օձի մը բարկութիւնը իշեցընելէ ետքը՝ իւր որինգը ջալելով զայն իւր ետևէն շվեցուցերէ , կը ըսեն թէ հիմակ Հնդկիկ կախարդները (jongleurs) այս սողուններուն կրթութիւն տալէ յառաջ անոնց թունալից կարթերը կը հանեն : Այս կարթերը քանի մը ամիսէ կը նորոգին ու կրնան նորէն մահ պատճառել :

Թարգ : ի Ֆրան ,
Պ. Պի .

Ա.Օ.Դ.

Գարուն Հայաստանին կը խստանայ իւր ընթերցողաց , որ հետ ըզհետէ առջի թերթով ուսումնական և հետաքրքրական հարցութեան պիտի ընէ և յաջորդ թուով , անոր պատասխանին պիտի տայ :

ՀԵՐՑՈՒՄ

Ա . Ճշմարիտ Ջէ մարտ մէ ե :

Ա Խ Ե Ւ Տ Տ Բ Ա Կ Ե Ն

Օդենիս 1 Փետրվար 1862 :

Յունուար 16 ին Մարսիլիա մեկնող Ֆիլիտ Օդենս շոգենաւուն մէջի ապրանքները .

Բաւրդ	պալեայ	127
Խաշխաշի հունտ	տոպրակ	130
Շուշմայ (սուսամ)	„ „ „ „ „	140
Շէհը	„ „ „ „ „	27
Խէժ	„ „ „ „ „	10
Բամբակ	„ „ „ „ „	15

Կոյն օրը Մարսիլիա մեկնող | Հետուան շոգենաւուն մէջի ապրանքները .

Բամբակ	պալեայ	416
Խաշխաշի հունտ	տոպրակ	335
Մաղ այծեայ (քէլլ [թի-յի-]) պալ	3	
Խէժ (զահն արակի)	„ „ „ „ „	19
Մատուտակի փայտ (թան քոօֆի-)	պ 10	
Բաորթ (Յահմա-դիլ)	„ „ „ „ „	1
Մետաքս	պալեայ	3
Բուրդ (Եաբուլ)	„ „ „ „ „	36
Չամիչ	տոպրակ	10

Տղրուկ (Գլուխ)	տակառ	3
Այծեամի բուրդ	պալեայ	4
Յունուար 20 ին 1 իվրիում մեկ նող Լոքափիտ անուն Անդը շոգենաւուն մէջի ապրանքները.		
Տորսոն (Կոչ պօյա)	պալեայ	1290
Բամբակ	"	214
Խէժ	սնտուկ	35
Ափիոն	"	26
Ճէհըի	տուլլիակ	34
Ճերմակ քար	թօնէլաթօ	45
Եղիպացորեն	քիլօ	2000
Լոնտրայի համար		
Ափիոն	սնտուկ	11
Բօթէրաամի համար		
Գիստոր (Ֆալը)	տուլլիակ	10
Կոր Եզօրքի համար		
Ափիոն	սնտուկ	91
Պոսթոնի համար		
Ափիոն	սնտուկ	14
Կոյն օրը թարիէսթ մեկնող Բնակիտ անուն Աւատ շոգենաւուն մէջի ապրանքները :		
Բամբակ	պալեայ	118
Մորթ	"	14
Ջիֆթիք	"	5
Այծեամի մորթ	"	3
Ապունդ (Կոնիչը)	տուլլիակ	26
Գիստոր (Ֆալը)	"	3
Ճէհըի	"	6
Վեղրամում	"	5
Թորթ	"	21
Ափիոն	սնտուկ	1
Տղրուկ (Գլուխ)	տակառ	4
Անեսակոյ համար		
Բամբակ	պալեայ	91

Ջիփթիք պալեայ 21

Վայրի կաղին (բալաճուա) տուլլիակ 100

Այս շաբաթուան թէ նաւուց և թէ շուտ ենաւուց մէջ գրուած զ լիսաւոր ապրանց նաւողչէքը (Կառլու) :

Շոգենաւու մէջ գրուածներունը

Տարոն 80 շէլին թօնէնաթօն

Վայրի կաղին 60 " "

Մերդ (Եկմիշ) 55 — 80 " "

Սպունդ 50 " "

Ափիոն 155 " "

Խէժ 50 " "

Փոխանակագիրք Օմիւռիայ

Լոնտրայի վրայ . . 122 1/2 123 1/4

Մարսիլիայի 192 — 194

Թարիէսթի 346 — 348

Անդղիայէն ելած և Խղմիր դալեք վաճառականական նաւուց անունները, մալիփաթուրայի և գրամներու զիները եկող շաբաթ Յաւելուածնոււ մէջ պիտի տեսնուի :

S. Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կը խստանանք մեր Արդոյ ընթերցալաց 15 օրը անդամ մը Յաւելուածնոււ մի նուիրել իրենց, օրուն մէջ գրեթէ առեւտրական տեղեկութիններ պիտի պարունակէ :

Յաւելուածին պատճառաւ սոի պուեցանք Հանդէսիս շրջանը, վեց ամիս ընելով՝ դինը բարձրացընել:

ՏԵՇԻՆ

Գի. Գ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ